ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ФАКУЛЬТЕТ БОГОСЛОВИЯ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF THEOLOGY

ՏԱՐԵԳԻՐՔ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԺԱ

ЕЖЕГОДНИК

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ

ТОМ XI

YEARBOOK

COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES

VOLUME XI

ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ
ЕРЕВАН - 2016

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ - 2016

YSU PRESS
YEREVAN - 2016

ԹՈՒԽ ՄԱՆՈՒԿ ՍՐԲԱՎԱՅՐԵՐԻ ՏՈՆԱԾԻՍԱԿԱՆ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Լիլիթ Սիմոնյան, Կարեն Հովհաննիսյան

Թուխ Մանուկը՝ ուխտ և ուխտավայր

Թուխ Մանուկը հայոց ժողովրդական քրիստոնեության սրբավայրի[1], թերևս, առավել տարածված անվանումներից է: Այդ անունը կրող սրբավայրերն ունեն տարբեր կառուցվածք: Դրանց տարածքում կարող են լինել եկեղեցիներ կամ դրանց փլատակներ, տնակ-մատուռներ, փոքրիկ դոլմենանման շինություններ, գերեզմաններ, խաչքարեր, սրբազան ծառեր, աղբյուրներ, քարակույտեր, ժայռեր, մենհիրներ և այլն, որոնց այցելում, ուխտ է անում ժողովուրդը: Դրանք կարող են գտնվել գյուղերի տարածքում կամ այդ տարածքից դուրս, հարթ և լեռնային վայրերում, կան նաև տան սուրբ հանդիսացող Թուխ Մանուկներ: Հայտնի են գերեզմանոցների տարածքում գտնվող Թուխ Մանուկներ: Հաճախ Թուխ Մանուկ սրբավայրը հանդիսանում է պաշտամունքային համալիր, որի տարածքում կարող է լինել մատուռ, կառուցված սուրբ համարվող գերեզմանի վրա, սուրբ աղբյուր, ծառ, քարե կոթող և այլն: Թուխ Մանուկները մեծ մասամբ տեղական սրբավայրի նշանակություն ունեն, սակայն կան նաև այնպիսիք, որոնց ուխտագնացությունները զանգվածային բնույթ ունեն, դրանց այցելում են շրջակա և հեռավոր վայրերից, նույնիսկ արտերկրից:

Այդ սրբավայրերի որոշ բաղադրիչներ թվագրվում են տարբեր պատմական շրջաններով, տատանվելով նախաքրիստոնեական ժամանակներից մինչև ուշ միջնադար: Որոշ բաղադրիչներ Թուխ Մանուկ են բեր-

---

[1] Սրբավայր ասելով այստեղ հասկանում ենք որոշակի աշխարհագրական վայր, որը մարդկային հանրույթի կողմից համարվում է օժտված հատուկ զորությամբ: Այդ զորություններին հաղորդակցվելու համար նույն հանրության ներկայացուցիչները կատարում են որոշակի գործողություններ, իսկ զորության առկայությունը հիմնավորվում է մի շարք առասպելական և իրական պատմությունների միջոցով կամ ավանդությամբ: Անմիջական հաղորդակցությունը սրբավայրի հետ տեղի է ունենում ուխտագնացության ձևով, և այդ դեպքում սրբավայրը կարելի է կոչել նաև ուխտավայր: Բացի այդ, հաղորդակցությունը կարող է լինել ոչ անմիջական և ոչ ֆիզիկական՝ երազների, տեսիլքների, տարածության վրա կատարվող ծեսերի ձևով:

վել այլ (սրբա)վայրերից: Սակայն հնարավոր չէ ճշտել (առանձին բացառություններով), թե երբ են դրանք անվանվել Թուխ Մանուկներ և արդյոք ստեղծման, կառուցման իսկ օրից կոչվե՞լ են Թուխ Մանուկ, թե՞ այդպես են վերանվանվել ավելի ուշ: Այդ անունը կրող սրբավայրերը տարածված էին Հայկական լեռնաշխարհի շատ մասերում՝ Վասպուրական, Տարոն, Բայազետ, Բագրևանդ, Կարս-Բասեն, Աղձնիք, նաև Արևելյան Հայաստանի Ուտիք, Ջավախք, Արարատյան դաշտավայր, Արագածոտն, Կոտայք, Գեղարքունիք, Վայոց ձոր, Շիրակ, Լոռի:

Ուխտագնացությունը, սրբավայր այցելելը ժողովրդական քրիստոնեության պաշտամունքի ձևերից է, որը լայն տարածում ունի հայոց մեջ[1]: Եկեղեցին այսօր միտում ունի պաշտոնապես իր մեջ ընդգրկել ժողովրդական քրիստոնեության դրսևորումները, ինչը Թուխ Մանուկ սրբավայրերի դեպքում արտահայտվում է դրանց տեղերում եկեղեցիներ կառուցելով և օծելով: Այդպիսի նոր կարգավիճակ ունեն, օրինակ, Շահումյանի, Արագածի, Գեղհովիտի, Արգելի, Ղուկասավանի, Լանջաղբյուրի և այլ գյուղերի Թուխ Մանուկները:

Իրեն հայ քրիստոնյայի կամ հավատացյալ համարողի ընդհանուր բնութագրում գերակայում է կրոնա-ավանդական տոն կատարող, ծիսահավատ հայի կերպարը: Եկեղեցի կամ որևէ այլ սրբավայր այցելության հիմնական դրդապատճառը կրոնական տոն կամ ուխտ նշելն է: Մեր օրերում այցելուների գերակշիռ մասը նախապատվությունը տալիս է ուխ-

---

[1] Համաձայն Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու. «Ուխտագնացությանը երկրից դեպի Աստված հոգևոր ճամփորդություն է՝ միջնորդավորված սրբավայրերով: Այն կապված է սրբացած տեղի գաղափարի և դեպի այդ սրբավայրը ձգտելու մարդկային բնական զգացման հետ: Ուխտագնացությունների միջոցով քրիստոնյան խորհրդական ու աղոթական հայեցողությամբ հաղորդվում է անցյալի սրբազան ժառանգությանը և դրանով իսկ կապ հաստատում ապագայի հետ, քանզի առանց անցյալի հետ կենդանի կապի անիմաստ է ապագայի հետ շփում ստեղծելու փորձը: Ուխտագնացությունը հայ մարդու անհատական կամ հավաքական կյանքի հոգևոր դաստիարակման լավագույն միջոցառումներից է, որը դեպի հոգևոր վերածնունդ տանող ճանապարհն է»: Իսկ ուխտավորներին բնութագրում է. «Ուխտավորը հավատքով և իմաստությամբ առլեցուն այն անձն է, որը քաջ գիտակցում է իր մեղանչականությունը և պահանջ է զգում Աստծու և սրբությունների հետ հաղորդակցվելով ոչ միայն հագեցնել իր հոգեկան ծարավը, իմաստավորել իր կյանքը, այլև զորություն ստանալ Սուրբ վայրով՝ դիմակայելու գալիք փորձություններին», տես. **Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի**, Քրիստոնեական, Վանաձոր, 2001, էջ 102:

տագնացության համալիրում կատարվող ծեսերին այլ ոչ, օրինակ, պահքին, ապաշխարությանը, որոնք երբեմնի հավատացյալի կերպարը բնութագրող և որոշակիորեն կանոնարկված գաղափարական-պաշտամունքային գործոններ էին: Ներկայումս ժողովուրդը մեծ տեղ է տալիս տոնածիսական գործոնին[1]:

Չնայած այն բանին, որ ուխտ անելու ու սրբավայր գնալու վերաբերյալ Հայոց եկեղեցին մեծ մասամբ կոնկրետ օրեր չի սահմանել, ժողովուրդն ունի ուխտագնացության իր հաստատագրված ու անխախտ օրերը:

Անհրաժեշտ է նշել, որ «ուխտ» հասկացությունը որոշ չափով ենթարկվել է պատմական իմաստափոխության: Ընդհուպ մինչև խորհրդային շրջանը «ուխտ» կարող էր նշանակել բնակավայրից հեռու գտնվող վանքը, որտեղ բնակվում էին վանականներ: Վանքերի վերացումից անդին այդպես կոչվում էին այն տեղերը, ուր ժողովուրդը դիմում էր ուխտագնացության: Մասնավորապես, Սպիտակի Լեռնանցք գյուղի բնակիչներն այսօր էլ ժողովրդական քրիստոնեության բոլոր սրբավայրերն անվանում են «ուխտ»[2]:

Ուխտագնացությունը և դրա ծիսափունջը սերտորեն առնչվում է էթնիկ ինքնության և հայրենի հողի հետ նույնանալու հոգեբանական գործոնի հետ: Ինքնությունն արտացոլող ծիսասովորութային տարրերից են դեպի Թուխ Մանուկ սրբավայրերը կատարվող ուխտագնացությունները՝ ավանդական տոների ժամկետներում (Զատիկ, Վարդավառ, Համբարձում, Կանաչ Կիրակի, Ս. Աստվածածին և այլն), ինչպես նաև անհատական կամ ընտանեկան այցելություններն ու ծեսերը՝ թե՛ տոների համալիրում, թե՛ դրանցից անկախ:

Թուխ Մանուկի ուխտագնացությունները

Թուխ Մանուկը համաքրիստոնեական, տոնվող կամ պաշտոնական սուրբ չէ[3], նրան նվիրված հատուկ օր եկեղեցական տոնացույցում չկա, սակայն գոյություն ունի այդ անունը կրող սրբավայրերի մի մեծ խումբ, որը բնորոշ է բացառապես հայերին: Յուրաքանչյուր Թուխ Մանուկ ունի

---

[1] **Ս. Մկրտչյան**, Հայոց տոնածիսական մշակույթ, Եր., 2016, էջ 266:

[2] **Լ. Սիմոնյան, Կ. Հովհաննիսյան, Լ. Ավետիսյան**, Դաշտային ազգագրական նյութ (այսուհետ՝ ԴԱՆ). Արագածոտն-Լոռի, Լեռնանցք, 2016:

[3] Ընդսմին, ժողովուրդը Թուխ Մանուկին որպես քրիստոնեական սուրբ է ճանաչում, և բոլոր ծեսերը, հավատալիքները, ավանդույթները կապում է քրիստոնեության հետ:

ժողովրդի կողմից ուխտագնացության հստակ հաստատագրված իր օրը: Սակայն դիտվում է դիպվածային, ազատ ժամկետներում ուխտ անելու երևույթի ավելացման միտում: Այդուհանդերձ, կարևոր է Թուխ Մանուկ սրբավայրերի դիտարկումը և քննարկումը հայոց տոնածիսական ավանդույթների ընդհանուր համալիրում: Վերջինս հնարավորություն կտա ոչ միայն վերլուծել Թուխ Մանուկներին առնչվող տոնածիսական համալիրը, այլև այդ համալիրի միջոցով իրականացվող կենդանի կապը Թուխ Մանուկների և այլ սրբավայրերի միջև:

Ըստ մասնակիցների սոցիալական կազմի Կ. Բազեյանն ու Գ. Աղայանը ուխտագնացությունները դասակարգել են երեք խմբերի մեջ. ա. անհատական, բ. ընտանեկան և գ. ազգակցական-դրացիական[1]: Ուխտագնացության տեսակների այս դասակարգումը հաստատվում է նաև մեր գրանցած դաշտային նյութերով, սակայն ավելի նախընտրելի է երրորդ (գ.) խումբն անվանել համայնական ուխտագնացություններ, քանի որ դրանց մասնակցում են նաև հեռավոր վայրերից և նույնիսկ արտերկրից ժամանած մարդիկ, որոնք մյուսների հետ դրացիական կամ ազգակցական կապեր չունեն:

Թուխ Մանուկ սրբավայրերի այցելությունը կարելի է դասակարգել նաև ըստ ժամկետի. ա. եկեղեցական տոնացույցին համապատասխան որևէ տոնի համալիրում, բ. հատուկ օր, որը կարող է լինել ինչպես շարժական, այնպես էլ անշարժ, գ. անհատական կամ ընտանեկան ուխտ կամ այցելություն՝ կարգավորվող ըստ շաբաթվա օրերի, դ. դիպվածային այցելություն, երբ ուղղակի անցնում են սրբավայրի կողքով, այս վերջին տեսակն առաջին հերթին վերաբերում է ճանապարհների վրա գտնվող Թուխ Մանուկ սրբավայրերին: Առաջին երկու խմբերն ունեն ինչպես ուխտագնացության տարեկան պարբերականություն, այնպես էլ անհատական և ընտանեկան այցելության համար շաբաթվա օրեր: Երրորդի և չորրորդի դեպքերում համայնական ուխտագնացությունները բացակայում են:

Հատուկ օր ունեցող ուխտագնացություններ

Մի խումբ Թուխ Մանուկ սրբավայրեր ուխտագնացություններ են լինում եկեղեցական որևէ տոնի համալիրում:

---

[1] **Կ. Բազեյան, Գ. Աղայան**, Ժողովրդական քրիստոնեության դրսևորումները գյումրեցիների տոնածիսական վարքում//ՇՀՀԿ գիտական աշխատություններ, հ. XIV, Գյումրի, 2011, էջ 81:

Ըստ Վ. Տեր-Մինասյանի, յուրաքանչյուր հայ՝ եկեղեցիներ այցելելուց հետո, հատկապես Խաչվերացին գնում էր Թուխ Մանուկ սրբավայրեր՝ իր հարգանքը մատուցելու, մոմ վառելու, խունկ ծխելու, աղերս ու աղոթք անելու համար[1]: Համբարձման տոնին, բոլորը կանաչ-կարմիր հագած, այլևայլ տեղերի հետ մեկտեղ ուխտի էին գնում նաև Թուխ Մանուկներ[2]: Բագրևանդի Ղոթուրլու գյուղի Թուխ Մանուկ ուխտ էին գնում մանավանդ Համբարձման տոնին[3]: Խաստուր գյուղի Թուխ Մանուկը պարտադիր գնում էին Ս. Աստվածածնա տոնին, այլապես ուխտը կատարված չէր համարվի[4]:

Վարդենիկում Թուխ Մանուկ են գնում հատկապես Վարդավառին՝ գյուղի գլխավոր սրբավայր՝ Իշխանավանքի ուխտից հետո[5]: Ոչ վաղ անցյալում Ծաղկազարդին և Համբարձմանը ուռենու ճյուղեր էին դնում պուլիկի մեջ, մեջը լցնում Թուխ Մանուկի ջրից[6] և ավելացնում խնոցու մեջ, որ լավ կարագ լինի: Տարվա մնացած ժամանակ այցելում են երբ ցանկանան՝ սրբին հաղորդակցվելու նպատակով[7]: Վարդավառի օրը Գեղարքունիքի Ակունք գյուղի երիտասարդները իրենց հյուր եկած հասակակիցների հետ առավոտյան, երգերով ու պարերով գնում են վանք, պարտադիր կանգ առնելով ճանապարհի վրա գտնվող Թուխ Մանուկ սրբավայրերում[8]: Արագածոտնի Մելիք գյուղի Թուխ Մանուկի ուխտը նույնպես Վարդավառին է, իսկ նրա քույրը համարվող Շողակաթ սրբավայրի ուխտը՝ Համբարձմանը[9]: Վարդավառին է նաև Հնաբերդի Թուխ Մանուկի

---

1 **Վ. վարդ. Տեր-Մինասեան**, Անգիր դպրութիւն և հին սովորոյթներ, Բ. հատոր, Կ. Պոլիս, 1904, էջ 159:

2 Նույն տեղում, էջ 134:

3 **Ս. Հայկունի**, Բագրևանդ - Ջրաբաշխ գաւառ, Վաղարշապատ, 1894, էջ 25:

4 Նույն տեղում, էջ 364:

5 **Կ. Հովհաննիսյան**, Գեղարքունիք. մի քանի Թուխ Մանուկ սրբավայրերի մասին, Աստվածաբանության ֆակուլտետի տարեգիրք, Թ., Եր., 2014, էջ 209-210:

6 Վարդենիկի Թուխ Մանուկին կից կա աղբյուր, որ գյուղի մի մասին ապահովում է ջրով, այդ աղբյուրը ևս Թուխ Մանուկ է կոչվում:

7 **Լ. Սիմոնյան, Կ. Հովհաննիսյան**, ԴԱՆ, Գեղարքունիք, Վարդենիկ, 2013:

8 **Հ. Աբրահամյան**, Վարդավառյան ավանդույթների արդի դրսևորումները Գեղարքունիքում (ըստ Ակունք գյուղի ազգագրական հետազոտությունների)// Աստվածաբանության ֆակուլտետի Տարեգիրք, Զ., Եր., 2011, էջ 352: Ակունքում կան 5 Թուխ Մանուկ սրբավայրեր, տես՝ **Ն. Շամամյան**, ԴԱՆ, Գեղարքունիք, Ակունք, 2011:

9 **Լ. Սիմոնյան, Կ. Հովհաննիսյան, Լ. Ավետիսյան**, ԴԱՆ, Արագածոտն, Մելիք, 2016:

ուխտը՝ սկզբից գնում են Ս. Հովհաննես, վերջացնում են Թուխ Մանուկում[1]:

Կարմիրգյուղի Թուխ Մանուկը գտնվում է գերեզմանոցի մեջ: Գերեզման գնալիս պարտադիր այցելում են սրբավայր, իսկ բուն ուխտագնացությունը լինում է Զատկի մեռելոցին: Սակայն սովորաբար գերեզմաններին այցելության գնալիս ևս այցելում են Թուխ Մանուկ[2]: Անհատական ուխտ-այցեր հիմնականում լինում են շաբաթ, կիրակի և հինգշաբթի օրերին՝ մինչև մութն ընկնելը[3]:

Պտղնիի Թուխ Մանուկի ուխտի օրը Զատիկն է, թեև այլ օրերին ևս այս սրբավայրը միշտ էլ այցելուներ ունի: Գետարգել Ս. Նշան վանքի ուխտին (Առինջ գյուղ)՝ Զատկի հաջորդ շաբաթ օրը, աղն Առինջում օրհնել են տալիս և բերում Թուխ Մանուկ, հետագայում այստեղի մատաղի արարողությունների մեջ օգտագործման համար: Այստեղ ուխտագնացության օրը գոյություն ունի հատուկ ծիսակարգ. Աստծուն խնդրում են օրհնել աղը, վառած մոմը դնում են աղի բաժակի մեջ, թղթով կամ կապրոնի շշով ծածկում են, Թուխ Մանուկից բերում են տուն, այդ դեպքում 2 մոմ թողնում են սրբավայրում, մեկը տանում տուն: Նույն ծեսը կատարում են և Տըրնդեզին՝ ծիսական խարույկը վառելով սրբավայրից այդ կերպ բերած մոմով[4]: Զատիկը նաև Մեղրաձորի Թուխ Մանուկ սրբավայրի ուխտի օրն է: Սրբավայրը գտնվում է Թեժառույքի վանքի տարածքում, որտեղ ըստ տեղական առասպելի, վայրի տանձենու տակ սպանվել ու թաղվել է Թուխ Մանուկը: Այդ օրը Մեղրաձոր գյուղի բնակչության մեծ մասը անցկացնում է վանքի տարածքում, մատաղներով ու խնջույքով: Բնականաբար, վանք և մասնավորապես Թուխ Մանուկ այցելում են նաև այլ օրերին, սակայն համայնական ուխտագնացության օրը Զատկի կիրակին է[5]:

---

[1] **Լ. Սիմոնյան, Կ. Հովհաննիսյան, Լ. Ավետիսյան**, ԴԱՆ, Արագածոտն, Հնաբերդ, 2016:

[2] **Լ. Սիմոնյան, Կ. Հովհաննիսյան**, ԴԱՆ, Գեղարքունիք,Կարմիրգյուղ, 2013:

[3] **Կ. Հովհաննիսյան**, նշվ. աշխ., էջ 220:

[4] **Լ. Սիմոնյան**, ԴԱՆ, Կոտայք, Պտղնի, 2013:

[5] **Լ. Սիմոնյան, Գ. Հակոբյան**, ԴԱՆ, Կոտայք, Մեղրաձոր, 2013:

Ապարանի ջրամբարի հարևանությամբ գտնվող Զովունիի[1] Թուխ Մանուկի ուխտի օրերն են Ս. Ծնունդը, Վարդավառը, Զատիկը, Համբարձումը[2]: Համբարձմանը (Զանգյուլումին) աղջիկները ծաղիկները տանում էին Թուխ Մանուկ: Այսօր էլ հավաքվում են Տամջլու (Եղիպատրուշ), Չամոլու (Քասախ, այս գյուղը մնացել է ջրամբարի տակ, իսկ բնակչությունը տեղափոխվել է Աշտարակի շրջան), Պռոշյան, ներկայիս Զովունի գյուղերից՝ համայնական ուխտագնացության: Նվիրաբերում են շուշաներ, խաչհամբույրը (մետաղադրամը) կպցնում են քարին, եթե կպնում է, մուրազը կատարվում է: Գլխացավի, հոդացավի դեպքում մատուռի ավելը քսում են ցավոտ տեղին՝ լավանում է: Մատաղ անում են հատուկ դեպքերում, օրինակ, երբ երեխան հիվանդ է կամ հաշմանդամ: Մատաղը հիմնականում գառ է, որը բաժանում են 7 տեղ (տուն): Ինչպես ընդունված է ժողովրդական բազմաթիվ այլ սրբավայրերում, մատաղի գառան ականջը նախապես կտրում են, արյունը խաչաձև քսում են պատին, հետո՝ այն մարդու ճակատին, որի համար մատաղ են խոստացել, հետո նոր՝ մյուսների ճակատին: Երբեմն գնում են ոտաբոբիկ, չոքեչոք, առանց խոսելու, մտքում աղոթելով[3]:

Արտաշատի Թուխ Մանուկ սրբավայրի ուխտի օրը գլխավորապես Ս. Ծնունդ է: Ամեն տարի 3 աքաղաղ են մատաղ անում Ս. Ծննդյան օրը: Մյուս օրերին նույնպես մատաղ են անում աքաղաղ, երբեմն գառ: Ուխտի գալիս են հիվանդներ, անքնությամբ տառապողներ: Մաշկային հիվանդությունների դեպքում մոմերի տակի ավազը լցնում են ձեռքերին ու վերքերին և բուժվում են[4]:

Գեղաշենի Թուխ Մանուկի ուխտի օրերն են Ս. Սարգսի տոնը և Զատկի մեռելոցը: Եթե ինչ-ինչ պատճառներով չեն կարող գնալ Ս. Սարգիս մատուռը, որ գտնվում է բարձունքին, գյուղից բավական հեռու, ա-

---

[1] Զովունի գյողը երբեմնի գտնվել է Ապարանի ջրամբարի տեղում, ջրամբարի կառուցման հետևանքով բնակչությունը տեղափոխվել է ներկայիս Երևանից ոչ հեռու գտնվող Զովունի գյուղը: Թուխ Մանուկ մատուռի և Ս. Վարդան եկեղեցու քարերը հատուկ տեղափոխվել են ավելի բարձր տեղ՝ ջրի տակ չհայտնվելու նկատառումներով: Ինչպես հայտնի է, այդ սրբավայրերից ոչ հեռու գտնվող Ս. Պողոս-Պետրոս եկեղեցին այժմ էլ պարբերաբար սուզվում է ջրամբարի ջրերի տակ:

[2] **Լ. Սիմոնյան**, ԴԱՆ, Արագածոտն, Զովունի գյուղատեղի, 2013:

[3] **Լ. Սիմոնյան**, ԴԱՆ, Արագածոտն, Զովունի, 2013:

[4] **Լ. Սիմոնյան, Կ. Հովհաննիսյան,** ԴԱՆ, Արարատ, Արտաշատ, 2013:

պա Ս. Սարգսի ուխտը բավական է անել Թուխ Մանուկում՝ այն համարվում է կատարված[1]:

Թուխ Մանուկների մյուս խումբը ուխտագնացությունների *հատուկ օրեր* ունեցող սրբավայրերն են: Երբեմն այդ օրերը կարող են համընկնել եկեղեցական տոնի ժամկետի հետ, սակայն տոնակատարությունը կենտրոնացած է հենց Թուխ Մանուկում:

Կապուտանի Թուխ Մանուկ գնում են հիմնականում շաբաթ և կիրակի օրերին: Սակայն կա Հարսների հատուկ օր, երբ գյուղի հարսերը, հատկապես նորահարսերը, Զատկից երկու օր առաջ, այսինքն Ավագ ուրբաթ օրը գնում են Թուխ Մանուկ, մոմ վառում և աղոթք անում[2]:

Բյուրականի Թուխ Մանուկի օրը Կանաչ Կիրակին է, և այդ օրը սրբավայր են բերում կանաչ ներկած ձվեր: Սրբից խնդրում են երեխա, հաջող ամուսնություն, առողջություն և այլն: Սրբավայր մտնելիս ցանկություն են պահում մտքում, դուրս գալով իրենց պատկանող որևէ դերձան կամ լաթ, մասնավորապես, տարբեր գույների թելեր, կապում են սրբավայրի կողքերի թփերին՝ լռելյայն, որ նպատակը կատարվի: Մատաղ են անում աքաղաղ՝ դռնից աջ թփի տակի քարի վրա, զոհի թաթը թողնում են սրբավայրում: Գալիս են հիմնականում օրվա երկրորդ կեսին[3]:

Ծաղկահովիտի Ս. Ճգնավոր-Թուխ Մանուկի ուխտի օրն է սեպտեմբերի 11-ը՝ Սբխեչի օրը: Ուխտավորներ գալիս են նաև Արթիկի գյուղերից: Մատաղներ են անում: Մատուռի ներսի տապանաքարը համարվում է Ճգնավոր-Թուխ Մանուկի գերեզմանը, որի վրա կնունք են անում[4]:

Բազմամարդ ուխտով հայտնի է Ապարանի Լուսագյուղի Թուխ Մանուկը: Ուխտի օրը յուրաքանչյուր տարվա Համբարձման կիրակին է: Ուխտի են գալիս ոչ միայն տեղացիները, շրջակա գյուղի բնակիչները, այլև Հայաստանի մյուս վայրերից: Չհասած Թուխ Մանուկ նորոգված եկեղեցու հարթակին, դրանից քիչ ներքև կա երկու աղբյուր: Գետնից բխող աղբյուրը բուժում է աչքի հետ կապված հիվանդություններ (հատուկ բաժակով ջուր են վերցնում և քսում աչքերին, ջուրը թափել չի կա-

---

[1] **Լ. Սիմոնյան, Կ. Հովհաննիսյան**, ԴԱՆ, Կոտայք, Գեղաշեն, 2015:

[2] Ռեժիսոր **Խանե Պողոսյանի** տեսագրած նյութերից, Կոտայք, Կապուտան, 2015:

[3] **Լ. Սիմոնյան, Կ. Հովհաննիսյան**, **Ն. Շամամյան,** ԴԱՆ, Արագածոտն, Բյուրական, 2012:

[4] **Լ. Սիմոնյան, Կ. Հովհաննիսյան, Լ. Ավետիսյան**, ԴԱՆ, Արագածոտն, Ծաղկահովիտ, 2016:

ռելի): Մատաղ են անում աքաղաղ, գառ, որպեսզի ուխտն իրականանա, երեք կամ յոթ անգամ պտտվում են մատուռի շուրջ՝ աջից ձախ կամ արևելքից արևմուտք ուղղությամբ՝ իրենց հետ ունենալով նաև մատաղացու կենդանին: Աքաղաղներ են մատաղ անում եկեղեցու հարթակի քարերի վրա՝ արյունը խաչաձև քսելով ընտանիքի անդամների ճակատներին, իսկ գառը եկեղեցու շուրջ պտտելուց հետո տանում են: Արևելյան պատին կից մոմավառության համար մեծ մոմատեղի է դրված, որի վրա խարույկ է վառվում՝ մոմերը կապոցներով գցում են մեջը և ոչ թե սովորական մոմավառություն կատարում: Ուխտից հետո գյուղի շրջակայքում ընդունված է ընտանեկան, դրացիական խնջույքներ անելը: Այդ օրը, ինչպես և այլ հայտնի ուխտագնացությունների դեպքում է, սրբավայրի մոտ պարտադիր տոնավաճառ է լինում: Եկեղեցուց դեպի արևմուտք, բլրին, կաղնիների պուրակ է, որի ճյուղերը խստիվ արգելված է կտրել և գյուղ տանել, բայց կարելի է օգտագործել սրբավայրի տարածքում[1]:

Արգելի (Լուսակերտի) Թուխ Մանուկի օրը սեպտեմբերի վերջին կիրակին է: Մատաղ են անում հիմնականում աքլոր, իսկ գառը գյուղապետն իր կողմից մատաղ է անում և հյուրասիրում ուխտավորներին: Թուխ Մանուկը կապված է գյուղի մեջ գտնվող Ս. Գևորգ եկեղեցու հետ (դեպի եկեղեցի ճանապարհը անցնում է Թուխ Մանուկ սրբավայրի տակով), որի շուրջը գյուղի հին գերեզմանոցն է: Ուրիշ օրերի էլ են գնում, նույնիսկ եթե Ս. Գևորգ չեն այցելում: Թուխ Մանուկի առջև 1940-ականներից սկսել են թաղումներ անել, միտում կա, որ այն ևս կվերածվի գյուղի գերեզմանոցի՝ ձևավորված Թուխ Մանուկ սրբավայրի շուրջ: Լուսակերտի Թուխ Մանուկ հիմնականում գնում են երազանքների իրականացման, նաև երեխաների հիվանդությունները բուժելու նպատակով: Հատկապես այցելում են շաբաթ և կիրակի օրերին՝ կեսօրից հետո: Ամեն ամսվա վերջին կիրակին պատարագ է մատուցվում, քանի որ երբեմնի փլատակ-մատուռը արդեն վերակառուցված է որպես եկեղեցի և օծված[2]: Հին մատուռի պատից աճած բույսերի և կողքի մասուրի թփի վրա ուխտավորները կապում էին շորի լաթեր, որ իրենց հիվանդությունները

---

[1] **Լ. Սիմոնյան, Կ. Հովհաննիսյան**, ԴԱՆ, Արագածոտն, Լուսագյուղ, 2015:

[2] 2010-2013 թ. հին սրբավայրը վերաշինել են, 2013 թ. օգոստոսին օծել՝ այն աժմ եկեղեցի է:

մնան այդտեղ: Վերաշինելու ընթացքում այդ բույսերը՝ լաթերով հանդերձ, վերացրել են[1]:

Արագյուղի Թուխ Մանուկի ուխտի օրը մայիսի 13-ն է, բայց նաև գնում են, երբ ցանկանան: Ուխտավորները մատաղ են անում ինչպես մայիսի 13-ին, այնպես էլ ուրիշ օրերի: Հնում, մինչև անցած դարի 70-ական թ. ուխտերը եղել են երաժիշտներով, երգ ու պարով: Թուխ Մանուկ անունը կրող բազիլիկ եկեղեցու միջի երեք գերեզմաններից մեկն ու մեկին քար են կպցնում, եթե կպավ, մուրազը կկատարվի: Եթե գյուղից հեռացածները գալիս են գերեզմանոց, անպայման այցելում են նաև Թուխ Մանուկ: Կիրակի գնում են գերեզման, երկուշաբթի մատաղ անում Թուխ Մանուկի մոտ, առվի ափին, մատաղացուների գլուխները դնում են Թուխ Մանուկ եկեղեցու լուսամուտին: Հիմնականում մատաղ են անում աքաղաղ, լինում է և գառ[2]:

Ալափարսի Թուխ Մանուկ մատուռին՝ կառուցված ջրի ակունքի անմիջական հարևանությամբ, անպայման այցելում են տեղի հայտնի Ս. Վարդանի տոնի օրը, որը հոկտեմբերի վերջին կիրակին է (բայց պետք է չլինի ամսվա վերջին օրը, հոկտեմբերի 30-ը): Մատուռին կից մեծ ծառ կա, որին ուխտավորները լաթեր են կապում՝ հիվանդություններն այդտեղ թողելու նպատակով: Թուխ Մանուկին նույնիսկ ավելի զորավոր սուրբ են համարում, քան Ս. Վարդանին, քանի որ ըստ տեղական ավանդության Թուխ Մանուկը հենց Քրիստոսն է[3]:

Հացաշենի Թուխ Մանուկի օրը՝ նրա ծնունդն ու գալուստը նշվում է ուխտով, սեպտեմբերի առաջին շաբաթ օրը՝ յոթ օր շարժականությամբ: Նաև բոլոր մեծ տոները, հատկապես Զատիկն ու Սըբխեչը այնտեղ են տոնում[4]:

Ծիսական տոմարի ժամկետները Թուխ Մանուկների ուխտագնացությունների համար պատահական չեն: Դրանք կապված են գյուղատնտեսական այն գործունեության և դրա կարևոր փուլերի հետ, որը բնորոշ է տվյալ բնակավայրին: «Տարօնցիք թէև գարնանէ սկսեալ այս ամեն ուխտերը կը յաճախեն սահմանեալ օրերը՝ բայց իրենց ճիշտ ուխտագնացու-

---

[1] **Լ. Սիմոնյան, Կ. Հովհաննիսյան**, ԴԱՆ, Կոտայք, Լուսակերտ, 2013:

[2] **Լ. Սիմոնյան**, ԴԱՆ, Կոտայք, Արագյուղ, 2013:

[3] **Լ. Սիմոնյան, Կ. Հովհաննիսյան, Ն. Շամամյան**, ԴԱՆ, Կոտայք, Ալափարս, 2014:

[4] **Լ. Սիմոնյան, Կ. Հովհաննիսյան**, ԴԱՆ, Արագածոտն, Թալին-Հացաշեն, 2015:

թեան ատենը Խաչվերացէն սկսեալ մինչև ցրտերու սաստկանալը կը տևէ. վասն զի այս միջոցներուն երկրագործութեան զբաղանքներէն քիչ մը ազատուած կ'ըլլան»[1]: Անկասկած, նույնը վերաբերում է, օրինակ, Վայոց Ձորի մի շարք սրբավայրերին, որոնց բոլորի ուխտագնացությունները կատարվում են հոկտեմբերից սկսած[2]: Ընդհակառակը, այն տարածքներում, որտեղ առավել զարգացած է անասնապահությունը, ժամկետները տատանվում են մայիսի և նոյեմբերի միջև, քանի որ մայիսին սկսվում է լեռնային արոտավայրերի շրջանը, նոյեմբերին՝ ավարտվում: Ուխտագնացությունը կարող է նաև նախորդել խոտքաղի, անասնակերի մթերման ավանդական շրջանին, համընկնելով մայիս-հունիս ամիսների հետ: Քանի որ եկեղեցական տոնացույցը նույնպես կառուցված է գլխավորապես երկրագործական աշխատանքների փուլերով, տոները, որոնք նշվում են ուխտագնացությունների եղանակով, ծառայում են այդ փուլերի յուրօրինակ դադար-սահմաններ: Գործնական այս մոտեցումից, սակայն, անանջատ է կրոնականը, քանի որ հատկապես հանրային ուխտագնացություններն ուղղված են առաջին հերթին հանրային բարիքների առատության, ընտանեկան կապերի ամրապնդման և բարելավման նպատակների համար Աստծո բարեհաճությունը ստանալուն: Այս է պատճառը նաև, որ հաճախ անձնական խնդրով մատաղ անելու համար ընտրվում է հենց հանրային ուխտագնացության օրը՝ սրբի հատուկ օրը, երբ սրբավայրի զորությունն իբրև թե բազմապատկվում է: Չգրված և անգամ բանավոր չարտասանված հավատալիքի համաձայն, եթե ոչ ինքն Աստված, ապա գոնե սրբավայրին անուն տված զորավոր սուրբը ներկա է հանրային հավաքույթին և մասնակցում է մատաղին ու խնջույքին: Օտարներին, այդ թվում՝ մուրացկաններին, թշվառներին բաժանված և մտերիմների հետ կիսված հացը սրբի բաժինն է և ապահովում է սրբի հովանավորությունը: Մեր գրանցած բազմաթիվ դեպքերում երազով եկած սրբին, այս դեպքում՝ Թուխ Մանուկին խոստացված ուխտը, նվիրատվությունը աշխատել են կատարել հատուկ օրը, համարելով հոգու պարտք և արդյունավետ գործողություն:

---

[1] Մշոյ աշխարհ// Լումայ, 1899, գ. Ա, էջ 109:

[2] **Լ. Սիմոնյան, Կ. Հովհաննիսյան**, ԴԱՆ, Վայոց Ձոր, Ռինդ-Ելփին, 2015:

Մնհատական ուխտագնացություններ

Թուխ Մանուկների երրորդ խմբի մեջ մտնում են այն սրբավայրերը, որոնց հիմնականում այցելում են շաբաթվա որոշարկված օրերին:

Մանազկերտում կար վեց «տաղավարիկ»-մատուռ, որոնցից երկուսը պարզապես Սուրբ են կոչվել, իսկ մնացած չորսը՝ Թուխ Մանուկ: Դրանք մասնավոր ուխտատեղիներ են եղել: Պարտադիր ամեն կիրակ-նամուտին տեղացիները, հատկապես կանայք, խունկ, մոմ, կտավատի յուղ են տարել այդ սրբավայրերը, վառել ու ծխել են, աղոթելով. «Աստ-ված՝ ողորմի մեր նախնիների հոգուն»[1]:

Վանի Այգեստանի թաղամասում եղել է մի բլուր՝ Կլոր-դար, որի անունով շրջակայքը կոչվում էր Կլոր-դարի թաղ: Այդ բլրի գագաթին կար մի հինավուրց մատուռ՝ Թուխ Մանուկ: Ամեն կիրակնամուտին վանեցի կանայք ուխտ էին գնում այնտեղ՝ մոմ վառում, խունկ ծխում, դրա միջի կանթեղի մեջ ձեթ էին լցնում: Եթե կանթեղի ձեթը պակասեր, մատուռի շուրջը լույս էր փայլում, այս տեսնելով վանեցիները շտապ ձեթ էին տանում Թուխ Մանուկ: Գոյություն ուներ նաև աղոթք-մաղթանք. «Ով թուխ մորուս Թուխ Մանուկ, դու իմ մանկանը սպիտակ մորուս անես, արևշատություն տուր իմ կտրիճին՝ իր հոր տան ճրագը լինի, գա, քեզ միշտ ճրագալույս բերի, քո կիրակնամուտը վառ պահի»[2]:

Արճակից Վան տանող ճանապարհի աջ կողմում գտնվում էր Պախեզկա Թուխ Մանուկ փոքր մատուռը, որ իր անունը ստացել է մոտակա Պախեզիկ հայաբնակ գյուղից: Այս Թուխ Մանուկը հռչակված էր կանանց մեջ, որոնք ամեն կիրակի ուխտի էին գնում այս սրբավայրը, նպատակ ունենալով բուժել հիվանդ երեխաներին: Այն օգնում էր բերանացավ, վերքեր, գալար և այլ հիվանդությունների դեպքում: Մայրերը սրբավայրի հիմքից մի քիչ հող էին դնում երեխայի բերանը և յոթ անգամ պտտեցնում սրբավայրի շուրջ՝ Աստծո անունով երեխաները բժշկվում էին[3]:

Կիրակնամուտին էին այցելում նաև Շահումյանի Թուխ Մանուկը[4]:

---

[1] **Մ. Կ. Միրախորեան**, Նկարագրական ուղեւորութիւն ի հայաբնակ գաւառս Արեւելեան Տաճկաստանի, Մասն Գ, Կ. Պոլիս, 1885, էջ 48:

[2] **Ե. Լալայեան**, Վասպուրական. Հաւատք, ԱՀ, գ. XX, Թիֆլիս, 1910, էջ 54-55:

[3] **Գէորգ Շէրենց**, Սրբավայրեր, Տեղագրութիւն Վասպուրականի-Վանայ նահանգի գլխաւոր եկեղեաց, Վանօրէից և ուսումնասիրանաց, Թիֆլիս, 1902, էջ 163:

[4] **Լ. Սիմոնյան**, ԴԱՆ, Արմավիրի մարզ, Շահումյան, 2015:

Շիրակում պաշտելի և հարգի սրբավայրերի շարքում իրենց ուրույն տեղն ունեն Թուխ Մանուկները, որոնք տեղական նշանակության ուխտատեղիներ են[1]:

Ջրվեժի Թուխ Մանուկ այցելում են հատկապես կիրակի օրերին, տեղի Ս. Կաթողիկե եկեղեցին այցելելուց, պատարագին մասնակցելուց հետո[2]: Կիրակի օրն են գնում նաև Ճոճկանի[3], Անտառամուտի[4] Թուխ Մանուկներ:

Գեղհովիտի Ս. Մամաս-Թուխ Մանուկ եկեղեցին միշտ եղել է գյուղի գլխավոր սրբավայրը, որը բազմամարդ ուխտատեղի է եղել դեռևս մատուռ եղած ժամանակ: Մինչև Թուխ Մանուկի եկեղեցի դառնալը, հենց այն էլ ունեցել է եկեղեցու գործառույթ: Այսօր էլ եկեղեցին շատ ուխտավորներ ունի ու կատարվում են պսակադրություններ և կնունքներ: Ամեն անգամ սրբավայրի կողքով անցնելիս ընդունված է մոմ վառել: Մատաղ են անում աքլոր, ոչխար, պատահում է և երինջ՝ միայն ընտանիքի ծախսով: Հիմնականում այցելում են շաբաթ և կիրակի օրերին, ցանկացած ժամի: Եթե հատուկ նպատակով ուխտ պիտի անեն, գնում են կեսօրից հետո: Երբ հիվանդ երեխա կամ հարս ունեն, գնում են երեք անգամ, մոմ վառում, աղոթք անում, և փափագը միշտ կատարվում է: Գնում են նաև երեխա ունենալու, սիրածի հետ ամուսնանալուն աջակցելու խնդրանքով: Մինչև Թուխ Մանուկը եկեղեցու վերածելը, կապված էր Վարդավառի հետ[5]: Եթե Թուխ Մանուկից ուխտով ժառանգ են խնդրում ու ստանում, ապա մեկ-երկու տարի երեխայի մազերը չեն կտրում, հետո մատաղ են անում, շուշպա են բերում, այդ երեխայի մազերը կտրում, թաղում են շեմի տակ: Այս ամբողջ արարողությունը կատարվում է առանց հոգևորականի[6]:

---

[1] **Կ. Բազեյան, Գ. Աղայան**, նշվ. աշխ., էջ 80:

[2] **Ա. Բոբոխյան, Կ. Հովհաննիսյան,** ԴԱՆ, Կոտայք, Ջրվեժ, 2015:

[3] **Լ. Սիմոնյան**, ԴԱՆ, Լոռի, Ճոճկան, 2015:

[4] **Լ. Սիմոնյան**, ԴԱՆ, Լոռի, Անտառամուտ, 2014:

[5] Ըստ ամենայնի, եկեղեցի դառնալով Թուխ Մանուկն այլևս չի ընկալվել որպես սրբավայր-ուխտատեղի, այլ դարձել է ուղղակի գյուղի եկեղեցին, ինչով էլ պայմանավորված է Վարդավառի հատուկ ուխտագնացության դադարելը:

[6] **Լ. Սիմոնյան, Կ. Հովհաննիսյան**, ԴԱՆ, Գեղարքունիք, Գեղհովիտ, 2013:

Լիճքի Թուխ Մանուկի ուխտի օրերն են ամեն շաբաթվա երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ օրերը, այցելում են ցանկացած ժամի[1]: Մատաղ անում են հիմնականում շաբաթ օրերին: Մատաղը մորթում են սրբավայրի դռան աստիճանների վրա, մորթում է երեխայի հայրը: Մատաղ անելու ժամանակ միանգամից կտրում են գառան գլուխը, երեխայի կամ հիվանդի ճակատին արյունով խաչ են անում, գերեզմանաքարի վրա նույնպես: Մնացած արյունը լցնում են Թուխ Մանուկի առուն[2]:

Ապարանի Բադալի կամ Պապեի Թուխ Մանուկ այցելում են տարված ցանկացած օրը: Սրբավայրը մեծ տարածք է ընդգրկում: Վերևի մասում, ժայռերի վրա ավերված եկեղեցու հիմք է, որ առաջ ծածկված է եղել փայտով և դուռ է ունեցել, ներքևում՝ գետնից բխող սառնորակ աղբյուր: Աղբյուրի կողքը, ցանկապատած արտի մեջ, փոսում մեծ «խաչքար» կա[3]: Ոչ հեռավոր անցյալում այդ աղբյուրի ջուրը ցանում, լցնում էին մի քանի մետրի հեռավորության վրա գտնվող խաչանշանով քարի վրա, որպեսզի անձրև գա: Դա ծերերն էին անում: Այսօր էլ Բադալի Թուխ Մանուկում գառ են մատաղ անում եկեղեցական բոլոր տոներին: Սուրբը հզոր զավակատու է համարվում, եթե երեխա է տալիս, 7 տարի մատաղ են անում սրբավայրին: Խորհրդային տարիներին Ս. Ծննդյան Խաչը ջուրը գցելու ծեսն այստեղ են արել, մինչդեռ Ապարանի Ս. Խաչ եկեղեցին փակված էր: Այստեղ շատ ընդունված էր նաև մկրտություն անել (ԽՍՀՄ ժամանակ), մինչև եկեղեցու կարգը վերականգնելը: Հնում սովորաբար այստեղ գալիս էին Վարդավառից հետո: Առաջ շատ շուշպաներ (լաթեր, ժապավեններ) էին կախում թփերին և ծառերին, սակայն վառված մոմերից հրդեհ է եղել, որից հետո ավանդույթը դադարել է: Սրբավայրի ջուրը նաև բուժում է գորտնուկ: Մոլոքոր բուժելու համար աղբյուրից անխոս ջուր են տանում: Տարել են առավոտյան՝ *աղոթարանի*ն և բուժվել են[4]:

Ուխտագնացությունների այս խումբը իր ժամկետներով կապված է շաբաթվա օրերի, որոշ չափով՝ նաև ժամերի հատուկ-խտրական վերաբերմունքի հետ: Դեռևս Հովհան Մանդակունին նշում է, որ օրերը ոչնչով

---

[1] **Կ. Հովհաննիսյան**, նշվ. աշխ., էջ 217:

[2] **Լ. Սիմոնյան, Կ. Հովհաննիսյան**, ԴԱՆ, Գեղարքունիք, Լիճք, 2013:

[3] Խաչքար ժողովուրդն է ասում, իրականում մեծ ժայռակտոր է, վրան խաչ փորագրած:

[4] **Լ. Սիմոնյան, Կ. Հովհաննիսյան**, ԴԱՆ, Արագածոտն, Ապարան, 2011:

միմյանցից չեն տարբերվում[1], ժողովրդի մեջ հնուց անտի ամրապնդված է այն պատկերացումը, որ կան շաբաթվա սուրբ, հաջողակ և վտանգավոր, անհաջող օրեր: Եթե կիրակնամուտը կապվում է այն բանի հետ, որ ամեն կիրակի տոն է, ուստի և կիրակնամուտը՝ խթում, ապա չորեքշաբթի և ուրբաթ օրերին ուխտագնացություններ չեն արվում առաջին հերթին շաբաթվա այդ օրերի՝ անհաջողակ որակված լինելու պատճառով: Այդ օրերը նաև շաբաթական պասի օրերն էին, որոնց ընթացքում առհասարակ խուսափում էին գործունեության որոշակի ձևերից: Ամեն դեպքում, առավել սուրբ օրը կիրակին էր, տերունական օրը, և այդ օրվա ծիսական նշանակությունն, ինչպես տեսնում ենք, տեղափոխվել է Թուխ Մանուկներ այցելելու վրա, քանի որ այդ օրը Աստծո շնորհը ստանալու հավանականությունն ավելի բարձր է:

Վերջապես, չորրորդ խմբի Թուխ Մանուկների այցելությունը կարող է դիպվածային բնույթ կրել: Այս դեպքում հավատացյալը նախապես տեղեկություն չունի տվյալ սրբավայրի մասին կամ պատահական դիպվածով հայտնվում է դրա հարևանությամբ և այցելում է սրբավայր[2]: Դիպվածային ուխտագնացությունների խմբին են պատկանում նաև այնպիսիները, երբ հավատացյալը սրբավայր է դիմում՝ ուղեկցելով այլ մարդկանց: Վերջապես, այդպիսի ուխտագնացությունների թվին է պատկանում երազներում հայտնված սրբավայրեր այցելելը, հատկապես եթե երազատեսը հարցուփորձով է հայտնաբերում իրեն մինչ այդ անծանոթ սրբավայրը, որ ըստ երազի բովանդակության, իրեն պետք է տա սպասված օգնությունը: Հաճախ դրանք այն սրբավայրերն են, որ գտնվում են մեկուսի, հեռու ճանապարհներից ու գյուղերից և ոչ տեղացիները դրանք այցելում են դիպվածաբար: Օրինակ Փարպիի Թուխ Մանուկը, որոնք գտնվում է դաշտի մեջ[3], կամ Զնջոլուի Թուխ Մանուկը, որ գտնվում է Զնջոլուի Ս. Կարապետ հայտնի վարդավառյան ուխտատեղի-վանքի ճա-

---

[1] **Յովհան Մանդակունի հայրապետ**, Ճառեր, Անթիլիաս, 2001, էջ 398-399:

[2] Որպես օրենք, ցանկացած մարդ ի վիճակի է տարբերել սրբավայրը աշխարհիկ օբյեկտից: Ինչ-ինչ պատճառով հայտնվելով այդ տեղում, օրինակ, աղբյուրից ջուր վերցնելու համար, մարդիկ կարող են իրենց համար հայտնաբերել այդ վայրը և այցելել դրան մեծ փափագով:

[3] **Լ. Սիմոնյան, Կ. Հովհաննիսյան**, ԴԱՆ, Արագածոտն, Փարպի, 2013: Փարպիում կա երեք Թուխ Մանուկ, բացի հիշատակածից, մյուս երկուսը սեփական տան տարածքում են գտնվում և տան տերերի անունով են կոչվում:

նապարհին՝ բարձունքի վրա (ավերակ Ս. Սարգիս եկեղեցու կողքին՝ ուղիղ Ս. Կարապետի դիմաց)[1]: Սակայն քիչ չեն նաև այնպիսի դեպքերը, երբ սրբավայրը գտնվում է գյուղի մեջ, իր տեսակով տան սուրբ է, այսինքն, գտնվում է որևէ ընտանիքի հարկի և հովանավորության տակ: Հեռավոր վայրերից ժամանած մարդիկ ոչ միայն գտնում են սրբավայրը, այլև որոշակի ծիսական գործողություններ են կատարում այդտեղ: Այդ գործողություններից են, մասնավորապես, սրբավայրի տարածքը մաքրելը, շուշպա-գլխաշորերը հացի տաշտի մեջ լվանալը և այլն: Այսպիսի օրինակ է Արևշատի Եղիշի տան Թուխ Մանուկը, որտեղ տեղի են ունեցել հրաշալի բուժման դեպքեր: Այսպես, մի կին, որի 12-ամյա դուստրը անդամալույծ էր և չէր քայլում, երազում տեսել է այդ սրբավայրը, հարցնելով գտել է այն, ըստ երազում անհայտ ձիավորի կողմից տրված տրված ցուցմունքի իր աղջկա հետ գիշերել է սրբավայրում, և առավոտյան աղջիկը ինքնուրույն դուրս է եկել սրբավայրից և ապաքինվել: Մեկ այլ դեպքում շիկահեր մի տղամարդ հեծանվով եկել է, մաքրել է սրբավայրի տարածքը և նվեր-նկարները, պատճառաբանելով, որ երազով այդպիսի կարգադրություն է ստացել[2]: Նմանատիպ պատմություններ հայտնի են բազմաթիվ այլ տան սրբերի շուրջ ևս:

Այս խմբի մեջ են մտնում նաև ճանապարհների եզրերին կամ հանգույցներին գտնվող Թուխ Մանուկ սրբավայրերը: Դրանց մոտով անցնող ուղևորները, ճանապարհորդները հաճախ կարող են մտնել սրբավայր և իրենց հարգանքը մատուցել: Այդպիսի Թուխ Մանուկ սրբավայրերը իրենց այլ գործառույթների հետ մեկտեղ հանդիսանում են նաև ճանապարհորդների հովանավորներ:

Այդ տեսակի սրբավայրերից է Գեղհովիտի Թուխ Մանուկը (Մարտունի-Եղեգնաձոր ճանաապարհին՝ Սելիմի լեռնանցքի Գեղարքունիքի կողմում), այն այժմ եկեղեցի է: Միշտ եղել է ճանապարհի վրա: Շատ մեքենաներ ձորն են ընկել, սակայն Սուրբը պաշտպանել է մարդկանց, թեև մեքենաները ջարդվել են, մարդիկ ողջ են մնացել: Ճանապարհով շատ երթևեկողներ, ճամփորդներ մտնում, իրենց հարգանքն են մատուցում, աղոթում և շարունակում են ճանապարհը[3]:

---

[1] **Լ. Սիմոնյան, Հ. Հակոբյան, Կ. Հովհաննիսյան**, ԴԱՆ, Արարատ, Ուրցաձոր, 2014:

[2] **Լ. Սիմոնյան, Կ. Հովհաննիսյան, Ն. Շամամյան, Հ. Ասատրյան**, ԴԱՆ, Արևշատ, 2012:

[3] **Կ. Հովհաննիսյան**, նշվ. աշխ., էջ 212, 215:

Քուչակի-Չամռլվա Թուխ Մանուկ-Ս. Հովհաննեսը ևս գտնվել է ճանապարհին մոտ, բարձունքի վրա: Մինչև Ապարանի ջրամբարի կառուցումը Թուխ Մանուկի բլուրը «իշխել է» այստեղով անցնող, գյուղերն իրար կապող ճանապարհի վրա: Անցնողներից շատերը մտել են սրբավայր, հարգանք մատուցել, աղոթել ու շարունակել ճանապարհը: Այս Թուխ Մանուկը համարվում է նաև ճանապարհորդների հովանավոր, այստեղ են այցելում ոչ միայն ճանապարհ գնացող տեղացիները, խնդրելով սրբի պաշտպանությունը ճանապարհին, այլև պատահաբար այստեղ հայտնված մարդիկ[1]:

Նման սրբավայր է նաև Ելփինի Թուխ Մանուկը (Արարատի ու Վայոց Ձորի մարզերն իրար կապող Թուխ Մանուկ լեռնանցքն այս սրբավայրի անունից է ստացել իր անվանումը): Այս սրբավայրը լավ խնամված է, տարածքում ունի տաղավար՝ հանգստանալու համար, աղբյուր և մի քանի խաչքարեր: Այցելում են ինչպես Ելփինի գյուղացիները, այնպես էլ բազմաթիվ ճանապարհորդներ: Այն նույնպես ճանապարհորդների հովանավոր է[2]:

Ճանապարհորդների հովանավորներ են ոչ միայն Թուխ Մանուկները: Երևան-Մարտունի մայրուղու վրա է գտնվում Ս. Գևորգ սրբավայրը: Դրան կից կա փոքր, հին գերեզմանոց, ուր կան խաչքարեր: Բոլոր անցնող-դարձող մեքենաները ի պատիվ Սրբի երեք անգամ պարտադիր հնչյունային ազդանշան են տալիս: Հաճախ մեքենաները կանգնում են՝ անհատներ, ընտանիքներ իջնում, պատվում են Սրբին, մոմ վառում, աղոթում և շարունակում իրենց ճանապարհը[3]: Ճանապարհորդների հովանավորի գործառույթ է ունեցել նաև Փութկու Ս. Գևորգը, ինչպես և այլ սրբավայրեր պատմական Հայաստանի ամբողջ տարածքում[4]:

Բոլոր Թուխ Մանուկ սրբավայրերը, անկախ այն բանից, ունեն ուխտի հատուկ օրեր թե ոչ, այցելում են ցանկացած օր, տարբեր ժամերի՝ երբ պահանջ է առաջանում:

---

1 **Լ. Սիմոնյան, Կ. Հովհաննիսյան**, ԴԱՆ, Արագածոտն, Քուչակ, 2015:

2 **Լ. Սիմոնյան, Հ. Հակոբյան, Կ. Հովհաննիսյան**, ԴԱՆ, Արարատ և Վայոց Ձոր, Ուրցաձոր-Ելփին, 2014: **Լ. Սիմոնյան, Կ. Հովհաննիսյան**, ԴԱՆ, Վայոց Ձոր, Ռինդ-Ելփին, 2015:

3 **Լ. Սիմոնյան, Կ. Հովհաննիսյան**, ԴԱՆ, Գեղարքունիք, Վարդենիկ, 2013:

4 **Ст. Лисициан**, “Святыни” у перевалов, Советская этнография, М., 1936, N 4-5, с. 200-213.

Թուխ Մանուկ սրբավայրերի ուխտագնացության ժամկետները տարբեր են, սակայն ուխտագնացության նպատակներն ու ծիսական արարողությունները մեծ մասամբ միմյանցից չեն տարբերվում: Ուխտավորները հիմնականում մոմ են վառում, խունկ են ծխում, մատաղներ են անում, յոթ կամ երեք անգամ պտտվում են սրբավայրի շուրջ, իրենց ուխտ-ժապավեններն են կապում սուրբ ծառերին՝ մուրազները կատարվելու, հիվանդություններն այնտեղ թողելու և այլ ակնկալիքներով, սրբավայրի պատերին են փակցնում երազանքի քարեր: Բուժիչ աղբյուրների առկայության դեպքում որոշակի ծեսեր են կատարում՝ բուժման ակնկալիքով: Կան նաև դեպքեր, երբ այդ սրբավայրերի խնամողները կիրառում են ժողովրդական բժշկության միջոցներ՝ անկախ սուրբ ջրի առկայությունից:

Որոշ դեպքերում Թուխ Մանուկ սրբավայրերը կարող են տեղական ծիսակարգային առանձնահատկություններ ունենալ:

Թուխ Մանուկների մեծագույն մասը զավակատու են, այս գործառույթը թերևս ամենաէականն է: Մի քանի բացառությամբ, մնացածում իրականացվում է գրեթե նույն ծիսակատարությունը. ուխտագնացություն, մատաղ, մոմ վառել, խունկ ծխել և աղոթել: Սակայն լինում են և տեղական բացառություններ, օրինակ Գեղաշենի Թուխ Մանուկ այցելող կանայք իրենց հետ կողպեքներ են բերում և խնդրում օտար տղամարդկանց բացել դրանք, եթե կողպեքը բացվեց՝ զավակ կծնվի[1]:

Թուխ Մանուկ սրբավայրերին, ինչպես և բոլոր մյուս ժողովրդական սրբավայրերի կարևորագույն և հիմնական գործառույթներից է զանազան հիվանդությունների բուժումը: Այս դեպքում ևս առկա են տեղական առանձնահատկությունները, նույնիսկ միևնույն հիվանդության բուժման համար: Գրեթե բոլոր Թուխ Մանուկները բուժում են գորտնուկներ, սակայն նույնիսկ այս դեպքում դրանց բուժման ծեսերը տարբեր են:

Քանի որ բոլոր Թուխ Մանուկները համարվում են զորեղ մուրազատուներ, ապա գրեթե բոլորում կան երազանքի քարեր, խաչքարեր, տապանաքարեր, որոնց վրա գուշակություններ են անում. քարը քսում են և թողնում, եթե կպավ, մուրազը կիրականանա, եթե ոչ՝ չի լինի: Այս ամենով հանդերձ, միայն հազվագյուտ դեպքերում համարվում է, որ ուխ-

---

[1] **Լ. Սիմոնյան, Կ. Հովհաննիսյան**, ԴԱՆ, Կոտայք, Գեղաշեն, 2015:

տագնացության ժամկետը ևս կարևոր է ծիսական գործողության արդյունավետության համար:

ԹՈՒԽ ՄԱՆՈՒԿ ՍՐԲԱՎԱՅՐԵՐԻ ՏՈՆԱԾԻՍԱԿԱՆ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Լիլիթ Սիմոնյան, Կարեն Հովհաննիսյան

Բանալի բառեր *- ուխտագնացություն, Թուխ Մանուկ, ժողովրդական տոմար, սրբավայր, տոնածիսական, ժողովրդական քրիստոնեություն*

Այսպիսով, Թուխ Մանուկների ուխտագնացությունը աղերսվում է եկեղեցական տոնացույցի և ժողովրդական տոմարի սկզբունքների հետ: Ինչպես տեսնում ենք, անհատական, երբեմն նաև՝ ընտանեկան ուխտագնացությունները հատուկ ժամկետներ չեն ենթադրում, թեև կարող են կապված լինել շաբաթվա առավել նպաստավոր օրերի կամ որոշակի ժամերի հետ: Սակայն առավել հաճախ, հատկապես բավական մեծ ծախսերի հետ կապված մատաղները հարմարեցվում են սրբավայրի օրվան: Լինի ուխտագնացությունը համայնական թե անհատական, մեծ տարբերություն սրբավայրում կատարվող ծիսական գործողությունների միջև ըստ էության չկա: Այդուհանդերձ, միայն համայնական ուխտագնացությունների դեպքում է, որ սրբավայրում կազմակերպվում է տոնավաճառ:

Թուխ Մանուկին նվիրված սրբավայրերին մեր օրերում բնորոշ չէ երգերով և պարերով, գիշերային հսկումով և մի քանի օր տևող խնջույքով հայտնի այն ուխտագնացությունը, որ խորհրդային տարիներին նախորդող շրջանում դեռ հատուկ էր մեծ ուխտագնացություններին: Այդուհանդերձ, մինչև մեր օրերը պահպանվել են որոշ ծեսեր, որ կապված են սրբավայրի և այդտեղ գտնվող առանձին օբյեկտների հետ. մատաղը, մատուռի կամ եկեղեցու շուրջ պտույտ կատարելը, գուշակական գործողությունները, անձրև կանչելը, բուժման նպատակով կատարվող ծիսական գործողությունները և այլն: Միաժամանակ, տոնածիսական համալիրի տեսակետից Թուխ Մանուկ կոչվող սրբավայրերը ոչնչով չեն տարբերվում այլ սրբավայրերից, այսինքն, ծիսական հատուկ գործողությունները անմիջականորեն չեն բխում այն փաստից, որ սրբավայրը կոչվում է Թուխ Մանուկ և չի կարող կռվան ծառայել առ այն, որ Թուխ Մանուկը հայկական ժողովրդական սրբավայրի առանձին տեսակ է: Ավելին, ծիսական և ժամկետային առանձնահատկությունները խիստ տեղական են, կախված են բնական երևույթներից, շրջապատող բնական և մշակութային օբյեկտներից, տեղական առասպելական պատումներից և սրբավայրի շուրջ տեղի ունեցած իրական դեպքերից: Դա է մատնանշում նաև ուխտի հատուկ օրերի ցանկը, որը խմբվում է տո-

նական ավանդական և եկեղեցական ժամկետների շուրջ և արտահայտում է ժողովրդական տոմարի կարևոր փուլերը:

К ВОПРОСУ О ПРАЗДНИЧНО-ОБРЯДОВЫХ ОБЫЧАЯХ СВЯТИЛИЩ ТУХ МАНУК

Лилит Симонян, Карен Оганисян

Ключевые слова *- паломничество, Тух Манук, народный календарь, святилище, празднично-обрядовые, народное христианство*

Святилища армянского народного христианства под названием Тух Манук, распространенные на большой площади как современной РА, так и исторической Армении, известны помимо прочего традицией паломничества. К святилищам под этим названием совершались паломничества известных четырех видов, разделенных по принципу даты: на определенные праздники церковного календаря, в определенный особый день, в определенные дни недели или часы дня и в любое время. Исследование показывает, что первые два вида связаны с массовым или общинным, последние два – с индивидуальным, окказиональным или, реже, семейным характером паломничества. Для святилищ Тух Манук нехарактерны паломничества, длящиеся более одного дня, с ночным бдением, песнями и общими танцами, известные из материалов о других паломных местах, однако во всем остальном паломничества к Тух Мануку имеют схожий с иными святилищами облик. Особенности культа, в частности, обряды, совершаемые на территории святилища и связанные с целительной водой, животной жертвой, святыми деревьями, мелкими камнями или строением, имеют местный характер и не могут распространяться на другие святилища под тем же названием. Святилищам Тух Манук не присущи также случаи исцеления, специфичные исключительно для этих святилищ и неизвестные за их пределами. Даты праздников, избираемые для паломничества к Тух Мануку, отражают особенности местного хозяйственного быта и напрямую связаны с местным народным календарем. Окказиональные обряды, связанные с Тух Мануком, в т. ч. вызывание дождя, уборка на территории святилища и т. д., так же как и окказиональные паломничества, в т. ч., с целью защиты в дороге, посещение неизвестного святилища, указанного во сне или обнаруженного случайно, также не единичны и не прикреплены однозначно только к святилищам под названием Тух Манук. Таким образом, празднично-обрядовая сторона культа не

выявляет исключительность этих святилищ, напрямую связанную с их общим названием.

TOWARDS FESTIVE-CEREMONIAL CUSTOMS OF TUKH MANUK SANCTUARIES

Lilit Simonian, Karen Hovhannisyan

Keywords: *pilgrimage, Tukh Manuk, folk calendar, sanctuary, festive-ritual, folk Christianity*

Sanctuaries of the Armenian folk Christianity under the name of Tukh Manuk, distributed in a large area of contemporary RA as well as of historical Armenia, are visited according to the tradition of pilgrimage. Pilgrimages of all four known types are executed, divided acording to the principle of date: on certain festivals of the Church calendar, on certain special date, in certain days of the week or hours of the day, and at any time.

Investigation reveals that the first two types are connected with the mass or communal, the last two – with individual, occasional and, rarer, familiar character of the pilgrimage. Pilgrimages lasting more than a day, with all-night vigils, songs and dances witnessed about other holy places are not typical, although in general pilgrimages to sanctuaries Tukh Manuk look similar with other sanctuaries. Peculiarities of cult, in particular, rites executed in the sanctuary area connected with healing waters, animal sacrifice, holy trees, lesser stones etc. have local character and cannot be ascribed to all the sanctuaries under the same name. There are no cases of miraculous healing specific exceptionally for Tukh Manuk sanctuaries and unknown abroad. Dates of festivals chosen for pilgrimage to Tukh Manuk reflect features of local economical life and are directly connected with the local folk calendar.

Occasional rites, concerning Tukh Manuk, such as rainmaking, cleaning of the chapel's interior etc., as well as occasional pilgrimages such as aiming at protection on the way, visiting unknown sanctuaries by the hint of a dream or by chance, are not singular either and are not typical for sanctuaries called Tukh Manuk only.

Therefore the festive-ritual components of the cult do not reveal exceptionality of those sanctuaries, directly connected with their names.